

գրութիւնը կրնեն, չեն յիշատակեր Ս. Մարտինոսի եկեղեցին : Բայց կըր-
նանք ուրիշ միջոցի գիմելով որոշել անոր տեղը . — Նախ՝ գիտենք թէ
ո՛ւր կը գտնուի Կահիրէ . ուրեմն փնտռենք հիմա Բարեղոնը, քանի որ
ասոր եւ Կահիրէի միջեւ կը գտնուէր մեր փնտռած եկեղեցին :

Եգիպտոսի մէջ « Բարեղոն » անունը կը կրէր հնօրեայ բերդ մը՝ որ
կը գտնուէր Կարէն « Փոստատ » կամ նոյն բերդին անունով « Բարեղոն »
կոչուած քաղաքին մէկ ծայրը (1) : Այս քաղաքն եգիպտական սուլտան-
ներու մայրաքաղաք դարձաւ մինչեւ Կահիրէի հաստատութեան թուականը՝
969 : Այս թուականէն սկսած Փոստատ կոչուեցաւ նաեւ՝ Հին-Եգիպտոս :
Արդ՝ միջինդարեան մատենագիրներու « Բարեղոն »ը կը համարուու-
թանէ արդի « Հին-Եգիպտոս »ին . հետեւաբար Ս. Մարտինոսի եկեղեցին
պէտք է գտնուի Հին-Եգիպտոսի եւ Կահիրէի միջեւ : Ճիշտ այս երկուքին
մէջտեղը՝ Կահիրէի հարաւային արեւմտեան կողմը կը գտնուի « Կոմ-էլ-
Արմէն » ըսուած վայրը, ուր է Հայոց գերեզմանոցն իր Մար-Մինա կամ
Ս. Մինաս մատուռով : Այս մատրան քովի կը պիտի ըլլայ մեր փնտռած Ս.
Մարտինոսի եկեղեցին կամ գոնէ անոր մէկ մնացորդը : Ահա թէ ինչ կըսէ
այս մասին մեր ամենուս պաշտօնի եւ իսկոպէս Սրբազան Մատթէոս Արք-
եպիսկոպոս Իգմիրլեան, ինձ զրկած 16 հոկ. 1906 թ. նամակով . —
« Գալով Լեւոնի կնոջ Մարգարիտի գերեզմանի խնդրոյն . կը փութամ
« յայտնել թէ՛ Գահիրէէն կէս կամ երեք քառորդ ժամ հեռու Գոմ կը
« Արմէն (Հայոց գումարուած տեղը կամ բնակավայրը) ըսուած տեղը քով
« քովի Հայոց սեպհական նեղ պարտիզով մը (արեւելքէն արեւմուտք նեղ)
« զատուած Հայերն եւ Խպտիներն մէկ մէկ եկեղեցի ունին : Հայոց եկե-
« ղեցին անունն է Մար Մինա (Սբ. Մինաս) . Խպտիներուն եկեղեցին
« անունը չ'գիտեմ : Այս երկու եկեղեցիներն ալ, որոնց հիմնարկութեան
« թուականը յայտնի չէ, գեանին երեսէն հազիւ մէկ-մէկուկէս մեթր
« բարձր շինուած են : Քառասունական թուականներուն Կ. Պօլսեցի Մի-
« քայէլ անուն հայ վարդապետ մը Հայոց եկեղեցին կը փլցնէ, գեանի
« խորութիւնը կը լեցնէ եւ եկեղեցին հարթ գեանի վրայ վերստին կը
« կառուցանէ : Խպտիներու եկեղեցին իր նախնական վիճակին մէջ կը
« մնայ ցարդ : Յիշեալ պարտէզին հարաւային արեւմտեան անկիւնը (երկու
« մեթրի չափ երկայն եւ մէկ մեթրէն քիչ մը աւելի լայն) պատով զատ-

(1) Բարեղոն կոչուած հին բերդին մնացորդները կը տեսնուին դեռ Ղըպ-
սիներու քաղին մէջ՝ Կասր-եշ-Շամի պարիսպներուն ներսի կողմը : Այս
քաղը շինուած է հին Բարեղոսի աւերակներուն վրայ :